Նախապես հաստատվել է	Հաստատվել է
«ԷԷՀՕ» ՓԲԸ խորհրդի _____ նիստում խորհրդի նախագահ	«ԷԷՀՕ» ՓԲԸ _____ ժողովում ՀՀ էն և ԲՊ նախարար
_____ Մ.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ	_____ Ա.ՄՈՎՍԻՍՅԱՆ

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ

2011 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Տեղեկություն Ընկերության, նրա կառավարման մարմինների – ենթակառուցվածքների մասին

II. Արտադրական գործունեություն

III. Ֆինանսատնտեսական գործունեություն

IV. Աշխատանք – աշխատավարձ

V. Եզրափակիչ դրույթներ

VI. Հավելվածներ

I. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

անվանումը՝		
հայերեն լրիվ	-	«էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերություն
կրճատ	-	«էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ
ռուսերեն լրիվ	-	Закрытое акционерное общество "Оператор электроэнергетической системы"
կրճատ	-	ЗАО "Оператор электроэнергетической системы"
անգլերեն լրիվ	-	«Electro power systems operator» Closed joint-stock company
կրճատ	-	«Electro power systems operator» CJSC
հասցեն՝	-	ՀՀ, 0009, Երևան, Աբովյան փողոց 27
հեռախոս՝	-	(+37410) 524725
ֆաքս՝	-	(+37410) 547317
էլ.փոստ՝	-	office@energyoperator.am
ինտերնետային կայք՝	-	www.energyoperator.am
հարկ վճարողի հաշվառման համարը	-	01547732

«էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ հաշվարկային հաշվի համարները՝

«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ «Աղասյան» մասնաճյուղ	247460049700
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	1930001668200100
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ «Մյասնիկյան» մասնաճյուղ	16044033655200
«Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ	2380023919160100

Պետ.ռեգիստրում գրանցման համարը և ամսաթիվը՝

27312003639, 05.11.2003թ., վկայականի թիվ 03 Ա 062403

իրավակազմակերպական ձևը՝

փակ բաժնետիրական ընկերություն

2011թ. սեպտեմբերի 8-ի ՀՀ Կառավարության «էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցնելու մասին» N1285-Ա որոշման 1 կետով թույլատրվել է բաժնետոմսերի անվանական արժեքը նվազեցնելու միջոցով նվազեցնել ընկերության

կանոնադրական կապիտալը՝ համապատասխանեցնելով այն 2010թ. տարեվերջի դրությամբ Ընկերության զուտ ակտիվների արժեքին:

«էԷՀՕ» ՓԲԸ 26 հոկտեմբերի 2011թ. արտահերթ ընդհանուր ժողովում հաստատվել է ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումը՝ բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացնելու միջոցով:

<u>Ընկերության կորպորատիվ կառուցվածքը՝</u>

ա) Բաժնետերերի ընդհանուր ժողով

բ) Խորհուրդ

գ) Խորհրդի հանձնաժողովներ (2011թ. ընթացքում չեն ստեղծվել)

դ) գործադիր մարմին:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 2665270839 դրամ, որը կազմում է 311837 հատ հասարակ (սովորական) բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը՝ 8547 դրամ:

Բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, վճարված են նրա կողմից և կառավարվում են ՀՀ կառավարության և նրա լիազորված անձի՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի կողմից:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՏՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՅՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը, որն իրականացնելու համար ընկերությունը զբաղվում է գործունեության հետևյալ հիմնական տեսակներով.

1. էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատիվ տեխնոլոգիական և տնտեսական կարգավարում.
2. էլեկտրաէներգետիկական համակարգի (արտադրության, ներկրման, արտահանման և տարանցման) գործառույթների՝ ըստ կնքված պայմանագրերի համակարգային պլանավորում ու կոորդինացում.
3. էլեկտրաէներգետիկական համակարգում համաձայն լիցենզիայի պայմանների և Շուկայի կանոնների համակարգային նշանակության կառավարման և պաշտպանության սարքերի նախադրվածքների հաշվարկում, դրանք էներգիայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող այլ անձանց առաջադրում և դրանց (այդ սարքերի) աշխատանքի հսկում.
4. տարածաշրջանային էլեկտրաէներգետիկական համակարգերի հետ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի զուգահեռ աշխատանքի ապահովում.
5. էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատիվ և տեխնոլոգիական կապի, էներգահամակարգի դիսպետչերական և տեխնոլոգիական կապերի, հեռուստամեխանիկայի սարքավորումների շահագործում և նորոգում:

Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի (հատուկ թույլտվություն) առկայության դեպքում:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշմամբ,

Ընկերությանը տրված լիցենզիայի գործունեության ժամկետը 2010 թվականին երկարաձգվել է մինչև 2015թ. դեկտեմբերի 9-ը:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

1. **Բաժնետիրոջ ընդհանուր ժողով՝** Ընկերության կառավարման բարձրագույն մարմին.

Արմեն Խիկարի Մովսիսյան - ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար,

ընկերության բաժնետոմսերի կառավարման 100% լիազորությունները իրականացնող

Հաշվետու տարում գումարվել են տարեկան ընդհանուր ժողով (28.06.2011թ.) և երկու արտահերթ ընդհանուր ժողով (25.01.2011թ. և 25.10.2011թ.): Բոլոր ժողովները գումարվել են Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 2 հասցեում:

2. **Խորհուրդ՝** Ընկերության կանոնադրության 13 հոդված (13.1-ից 13.7 կետեր)՝ սահմանում են Խորհրդի բացառիկ և պատվիրակված իրավասությունները:

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր»
փակ բաժնետիրական ընկերության (ՓԲԸ) խորհրդի
Կ Ա Զ Մ Ը

Մնացական Անդրիասի Մնացականյան — «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն, խորհրդի նախագահ

Կորյուն Լուկաշի Աթոյան — ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցիչ

Բորիս Հակոբի Գյուլումյան — ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչ-ն պետ

Գագիկ Ռաֆայելի Մարկոսյան — «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն

	Եվգենի Ալեքսեյի Բիբին	«Հայաստանի էլեկտրացանցեր« ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
	Հովակիմ Սեդրակի Հովհաննիսյան	«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
	Սասուն Սաշայի Խաչատրյան	«Որոտանի հիդրոէլեկտրակայանների համակարգ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
	Արսեն Ռազմիկի Գրիգորյան	«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
	Սահակ Լյուդվիգի Աբրահամյան	«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
	Թորգոմ Կառլենի Մադոյան	«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
	Աշոտ Լևոնի Մանուկյան	«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն» ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն

ՄՆԱՑԱԿԱՆ ԱՆԴՐԻԱՍԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ

ծնված 1954թ. հուլիսի 25-ին, կրթությունը՝ բարձրագույն

Մնացական Մնացականյանը 1971թ-ին ընդունվել և 1976թ. ավարտել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի էներգետիկական ֆակուլտետը «Արդյունաբերական ձեռնարկությունների, քաղաքների և գյուղատնտեսության էլեկտրամատակարարում» մասնագիտությամբ:

Մ.Մնացականյանի աշխատանքային գործունեությունը ՀՀ էներգահամակարգում՝

1976 - 1982թ.թ.	«Հայգլխէներգո» ԱԳՎ «Արևելյան էլեկտրացանցեր» մ-ճ՝	ճարտարագետ-կարգավար, ավագ կարգավար, ԿԿՇ պետ:
1982 - 1996թ.թ.	«Հայգլխէներգո»՝ ԿԿՇ կարգավար, ավագ կարգավար, օպերատիվ գծով ծառայության պետի տեղակալ, «Հայէներգոարդ»ՊՁ գլխ.ճարտ-տի տեղակալ - ԿԿՇ պետ, Կարգավարական վարչության պետ- գլխավոր կարգավար, գլխավոր տնօրենի տեղակալ օպերատիվ մասով:
1996 - 1997թ.թ.	ՀՀ էներգետիկայի և վառելիքի նախարարություն՝ էներգակիրների իրացման և շրջանային ցանցերի աշխատանքների համակարգման վարչության պետի տեղակալ, պետի պաշտոնակատար:
1997 - 2002թ.թ.	«Հայէներգո» ՊՁ «ԲԷՑ»ԴՁ «Կենտրոնական էլ.ցանցեր» մ-ղ՝	գլխավոր ճարտարագետ:
2002 - 2007թ.թ.	«Հայաստանի էլեկտրացանցեր» ՓԲԸ՝տեխնիկական գծով տնօրեն,	գլխավոր տնօրենի տեղակալ-տեխնիկական հարցերով տնօրեն:
2007 -	«էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր»ՓԲԸ-ի	գլխավոր տնօրեն:

Մ.Մնացականյանը իր աշխատանքային գործունեության ընթացքում՝ սկսած 1976 թվականից էներգետիկ համակարգի տարբեր բնագավառներում իրեն դրսևորել է որպես բանիմաց, իր գործը բազմակողմանի տիրապետող, բարձրակարգ մասնագետ, պարտաճանաչ անձնավորություն: Աշխատելով ՀՀ էներգետիկայի համակարգում ստեղծել է առողջ կոլեկտիվ, պատրաստել է որակյալ մասնագետներ:

Մ.Մնացականյանը էներգետիկայի բնագավառում ներդրած նշանակալի ավանդի համար **պարգևատրվել է՝**

- ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հրամանագրով՝ **«Աշխատանքային արիություն» շքանշանով՝** 1988 թվականի երկրաշարժի ժամանակ էնէրգետիկ օբյեկտների վերականգնողական աշխատանքներին ակտիվ մասնակցելու համար:
- **ՀՀ Նախագայի կողմից՝ Շնորհակալագրով՝** Հայաստանի էներգետիկ համակարգի հիմնադրման 100-ամյակի կապակցությամբ:
- **ԱՊՀ Վաստակավոր էներգետիկ է :**
- Ռուսաստանի դաշնության աշխարհաքաղաքական խնդիրների ակադեմիայի կողմից՝ **ոսկե մեդալով՝** «ՀՀ անկաղության 20 ամյակի կապակցությամբ» անվանակարգում ՀՀ էկոնոմիկայի զարգացմանն ուղղված ներդրման համար:
- Ղարաբաղյան պատերազմի վետերանների միության կողմից՝ ՀՀ անկաղության 20 ամյակի կապակցությամբ՝ **«Շնորհակալագրով»՝** Ղարաբաղյան պատերազմի վետերաններին մշտապես աջակցելու համար:

Կորյուն Լուկաշի Աթոյան

Ծնվել է 1956 թ. փետրվարի 16-ին Տավուշի մարզի Բերդ քաղաքում:
1973 թ. գերազանցությամբ ավարտել է Բերդի թիվ 1 միջնակարգ դպրոցը:
1974 թ. ընդունվել է ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետը:
1979 թ. գերազանցությամբ ավարտել է Երեւանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը և գործուղվել ասպիրանտուրա:
1979-1981 թթ. ծառայել է խորհրդային բանակում:
1981-1982 թթ. և 1986-1988 թթ. աշխատել է Մոսկվայի շինարարության էկոնոմիկայի և կառավարման համամիութենական կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտի Երեւանի մասնաճյուղում, որպես կրտսեր, ավագ գիտական աշխատող, սեկտորի վարիչ:
1982-1985 թթ. սովորել է Մոսկվայի շինարարության էկոնոմիկայի և կառավարման համամիութենական կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտուրայում: 1986 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ՝ ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:
1988-1990 թթ. աշխատել է ՀՀ պետշին-ում որպես բաժնի պետ:
1990-1994 թթ. և 1996-1998 թթ. աշխատել է ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունում, որպես Նոր-Նորք ուսանողական ավանի վարչության կառավարիչ:
1994-1996 թթ. սովորել է Մոսկվայի պետական շինարարական համալսարանի դոկտորանտուրայում:
1996 թ. պաշտպանել է դոկտորական թեզ, ստանալով տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան:
1998-1999 թթ. աշխատել է ՀՀ Վարչապետի վերահսկողության ծառայությունում որպես գլխավոր մասնագետ:
1999-2000 թթ. աշխատել է ՀՀ պետական եկամուտների նախարարությունում բաժնի պետ:
2000-2001 թթ. աշխատել է ՀՀ կառավարության տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոնում խորհրդական:
2001-2005 թթ. աշխատել է ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունում որպես վարչության պետ:
2005 թ. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի փոխնախարար:
2009-2011թթ. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի գլխավոր խորհրդական:
2011թ. Երևանի տնտեսագիտական համալսարանի ռեկտոր:
ՌԴ ինվեստիցիայի և շինարարության ակադեմիայի իսկական անդամ:
1999 թ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ անդամ է:
2002 թ. ընտրվել է ՀՀԿ Նոր Նորքի տարածքային խորհրդի նախագահ:
2006 թ.-ից ՀՀԿ խորհրդի անդամ է:
Ամուսնացած է, ունի երկու երեխա:

ԲՈՐԻՍ ՀԱԿՈԲԻ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ

Պաշտոնը - ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ:

Ծննդյան օր, ամիս ամսաթիվ - 19.09.1959 թ.:
Կրթությունը (ուսումնական հաստատության անվանումը և ավարտելու տարեթիվը) - բարձրագույն, Երևանի պետական համալսարան (1976թ.-1981թ.)

Աշխատանքային գործունեությունը
1982 – 1994թթ աշխատել է Չարենցավանի «Հայավտո» ԱՄՓ-ում, որպես տնտեսագետ, բյուրոյի պետ, պլանատնտեսագիտական բաժնի պետ, գլխավոր տնօրենի տեղակալ տնտեսագիտության հարցերով:

1994թ.-1996թ., 2000թ.- 2001թ. - ՀՀ կառավարության աշխատակազմում, որպես գլխավոր մասնագետ, վարչության պետի տեղակալ, ՀՀ վարչապետի օգնական:
1996թ. - Երևանի քաղաքապետարանում Արաբկիրի բաժնի քարտուղարության պետ:

1997-ից 1999թթ. - «Հայէներգո» ՊՓԲԸ, որպես ֆինանսատնտեսագիտական վարչության պետ:
2001թ. – ՀՀ ԿԱ ջրային տնտեսության պետական կոմիտեում ֆինանսատնտեսագիտական վարչության պետ:

1999թ.-2000թ, 2001թ.-ից ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունում, որպես ֆինանսական վարչության պետ, ֆինանսատնտեսագիտական վարչության պետ:

ԳԱԳԻԿ ՌԱՖԱՅԵԼԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Ծնվել է 08.01.1952թ. Երևանում:

1974թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի արդյունաբերական ձեռնարկությունների և քաղաքների էլեկտրամատակարարում բաժինը:

1974 թվականից մինչև օրս աշխատում է Հայաստանի ԱԷԿ-ում, էլեկտրաարտադրամասի ինժեներից հասնելով մինչև ատոմակայանի գլխավոր տնօրենի պաշտոնին:

Պարգևատրված է տարբեր պատվոգրերով:

Ամուսնացած է, ունի երկու դուստր:

Եվգենի Ալեքսեյի Բիբին

Եվգենի Բիբինը ծնվել է 1965թ.:
Նա ավարտել է Ռուդնոի արդյունաբերական համալսարանը և ստացել է էլեկտրամեխանիկ-ճարտարագետի մասնագիտություն:
2003-2004թթ. Ուսուցում է ստացել “Ընկերության զարգացման կառավարում” ծրագիրը Ռուսաստանի Ֆեդերացիայի Կառավարությանը կից Ժողովրդական Տնտեսության Ակադեմիայում:

2005թ. մասնագիտական վերապատրաստում է անցել “Կառավարման Պետական Համալսարան”-ի բարձրագույն մասնագիտական կրթության հիմնարկությունում “Բիզնես գործարարական կառավարման մասնագետ - MBA”ծրագրով:

Մինչ “Հայաստանի էլ.Ցանցեր” աշխատանքի նշանակվելը Եվգենի Բիբինը զբաղեցրել է «Վոլգոգրադէներգո» ԲԲԸ գլխավոր տնօրենի պաշտոնը, իսկ մինչ այդ նա եղել է “Բրյանսկէներգո” ԲԲԸ գլխավոր տնօրեն և “Կուստանայէներգո” ԲԲԸ գլխավոր տնօրենի տեղակալ:

ՀՈՎԱԿԻՄ ՍԵԴՐԱԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ծննդյան տարեթիվ 23.04.1947թ.. Կրթություն - բարձրագույն
1965-1970 թթ. Երևանի Կ.Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտ

Մասնագիտություն -ջերմային էլեկտրական կայաններ

Որակավորում - ինժեներ – ջերմաէներգետիկ

Աշխատանքային փորձ
1970թ. ինստիտուտից գործուղվել է Երևանի ՋԷԿ և աշխատել կաթսատուրբինային արտադրամասի տուրբինային սարքավորումների շրջիկ-մեքենավար, մեքենավար, հերթափոխի պետ:
1973թ. կայանի հերթափոխի պետ:
1978թ. կաթսատուրբինային արտադրամասի պետի տեղակալ շահագործման գծով:
1980-1987թթ. Երևանի ՋԷԿ-ի կուսակցական բյուրոյի ազատված քարտուղար:
1987թ. Երևան ՋԷԿ-ի գլխավոր ճարտարագետ:
1991թ.-ից նշանակվել է Երևանի ՋԷԿ-ի տնօրեն:
1999թ.-ից «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն:
2005թ.-ից մինչև օրս «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն, Համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի նախագծի ղեկավար:

Պետական պարգևներ
1986թ. «Պատվո նշան» շքանշան
2010թ. «Անանիա Շիրակացու» մեդալ

ՍԱՍՈՒՆ ՍԱՇԱՅԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ծնվել է 1960 թվականին, Գորիս քաղաքում:

1978-1983թ.թ. ընդունվել և ավարտել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտը:

1981 թվականից աշխատանքի է անցել Գորիս քաղաքի տարբեր ձեռնարկություններում, իսկ 1999 թվականից ՀԷՑ ՊՓԲԸ Գորիսի շրջանային էլ. ցանցի տնօրեն:

2000 թվականից նշանակվել է ՀԷՑ ՓԲԸ «Գորիս էլ. ցանց» մասնաճյուղի տնօրեն, իսկ 2000թ. ապրիլ ամսից «Որոտանի ՀԷԿ-երի համակարգ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն:

Արժանացել է տարբեր պատվոգրերի և շնորհակալագրերի:

Ամուսնացած է, ունի երկու զավակ:

Գրիգորյան Արսեն Ռազմիկի

“ՄԷԿ” ՓԲԸ Գլխավոր տնօրեն .

Ծնվել է 22.05.1964թ. ք. Երևանում, ՀՀ:
Կրթությունը ` բարձրագույն, ինժեներ-հիդրոտեխնիկ,
Տեխնիկական գիտությունների թեկնածու:
ՀՀ Ինժեներական Ակադեմիայի թղթակից անդամ:

Աշխատանքային ուղին սկսել է 1986թ.՝ որպես վարպետ, այնուհետև ավագ գիտական աշխատակցի պաշտոնից հասնելով մինչև “ՄԷԿ” ՓԲԸ գլխավոր տնօրեն: Տարբեր տարիների աշխատել է որպես գլխավոր ինժեներ, տեղամասի պետ, գլխավոր տնօրենի առաջին տեղակալ, գործադիր տնօրեն, ՀՀ աշխատանքի պետական տեսչության տնօրեն, Գեղարքունիքի մարզի մարզպետ, տարածքային կառավարման նախարարի տեղակալ, ՀՀ նախագահի վերահսկողական ծառայության պետի տեղակալ, ՀՀ էլեկտրական Ցանցերի տարածքային կառավարման մարմինների հետ համագործակցության հարցերով գլխավոր տնօրենի տեղակալ, Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ) ԲԲԸ գլխավոր տնօրեն:

Պարգևատրվել է Ֆ. Նանսենի անվ. Ոսկե մեդալով, ՀՀ տարածքային կառավարման նախարարի մեդալով և այլն:
Ամուսնացած է, ունի երկու երեխա:

Սահակ Լյուդվիգի Աբրահամյան

Աբրահամյան Սահակ Լյուդվիգի ծնված 07 նոյեմբերի 1963 թ ք. Երեւան:
1978թ-ին ընդունվել է ք. երեւանի սննդի արդյունաբերական տեխնիկում (ստանալով տեխնիկ տեխնոլոգի որակավորում):
Տեխնիկումն ավարտել է 1982թ.-ին:
1982-1984թթ ծառայել է խորհրդային բանակում:
1984թ-ին ընդունվել է ք.երեւանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը: (ստանալով տնտեսագետի որակավորում):
Ինստիտուտը ավարտել է 1989թ-ին:
1993թ նշանակվել է Հրուշակեղենի կոմբինատում որպես գլխավոր տնօրենի տեղակալ:
1999թ մարտի 23-ին ընդունվել է ՀՀ Երկաթուղի Երեւանի էլեկտրամատակարարման մասնաճյուղի տնօրեն:
2000թ-ին ընդունվել է ք. Երեւանի Հյուսիսային համալսարանում (ստանալով իրավաբանի որակավորում): Համալսարանն ավարտել է 2005 թ-ին:
2002թ փետրվարի 18-ից մինչ օրս աշխատում է "Բարձրավոլտ էլեկտրացանցեր" ՓԲԸ-ում տնօրեն:
Ամուսնացած է: Ունի երկու երեխա:

Թորգոմ Կառլենի Մադոյան

Թորգոմ Կառլենի Մադոյանը ծնվել է 1962թ. հոկտեմբերի 19-ին:
Կրթությունը - բարձրագույն
1985թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը և ստացել է ճարտարագետ - ջերմաէներգետիկի որակավորում:

Աշխատանքային գործունեություն

1985-1994թթ.- Երևան ՋԷԿ-ում – շրջիկ մեքենքվարից … - հերթափոխի պետ:
1994-1996թթ.- «Երևանի էլ. ցանց» ՀՆՊՁ. Մաշտոցի» ԴՁ – շահագործման շրջանի պետ, տնօրեն:
1996-1998թթ. - Երևանի Աջափնյակ թաղապետարան- թաղապետ:
1998-1999թթ. - «ԲԷՑ» ՊՓԲԸ աշխատակազմի ղեկավար:
1999-2000թթ. - «Էներգաչափ» ՓԲԸ-ի գլխ. տնօրենի տեղակալ, գլխավոր ճարտարագետ:
2000-2002թթ.- «Հայէներգո» ՓԲԸ-ի գլխ. տնօրենի տեղակալ:
2002թ.- «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն:

2003թ. - «ԱՊՀ երկրների վաստակավոր էներգետիկ»-ի կոչում է ստացել:
Ամուսնացած է, ունի չորս երեխա:

ԱՇՈՏ ԼԵՎՈՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ծնվել է 1968թ. ապրիլի 8-ին Երևանում:

1985թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցը, 1992թ.՝ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի մեքենաշինական ֆակուլտետը:

1995թ. ավարտել է Հայաստանի ամերիկյան համալսարանի գործարար կառավարման ֆակուլտետի մագիստրատուրան:

Տնտեսագիտության դոկտոր է: Երկու մենագրության և 11 գիտական հոդվածների հեղինակ:

Մասնագիտական վերապատրաստման դասընթացներ է անցել Շվեդիայի ազգային բանկում (1996թ.), Պրահայի Կառլի համալսարանում (1997թ.), Համաշխարհային բանկի և արժույթի միջազգային հիմնադրամի Վիեննայի միացյալ ինստիտուտում (1997, 1998թ.թ.), Լոնդոնի կառավարման թագավորական ինստիտուտում (2002թ.), Անգլիայի բանկի (1996թ.), Տոկիոյի համալսարանի (1999թ.) և Հարվարդի համալսարանի (2006թ.) ուսումնական կենտրոններում:

1995-97թ.թ. աշխատել է ՀՀ կենտրոնական բանկում (նախագահի խորհրդական, աշխատակազմի ղեկավար), 1997-98թ.թ.՝ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունում (աշխատակազմի ղեկավար, գլխավոր վարչության պետ):

1998-99թ.թ. եղել է ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարը, 1999-2001թ.թ.՝ ազգային հեռուստատեսության ֆինանսական տնօրենը, 2001-2003թ.թ.՝ Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի փոխնախագահը:

2004թ. հոկտեմբերի 1-ից աշխատում է «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն /ՀրազՋԷԿ/» բաց բաժնետիրական ընկերությունում որպես գլխավոր տնօրենի տեղակալ, ապա՝ առաջին տեղակալ:

2011թ. ապրիլի 25-ին նշանակվել է «ՀրազՋԷԿ» ԲԲԸ գլխավոր տնօրեն:

Ամուսնացած չէ:

Խորհրդի գործունեությունը

2011թ. ընթացում Խորհուրդը գումարել է 4 նիստ, որից 2-ը հեռակա քվեարկությամբ, Խորհրդի նիստերի օրակարգը և դրան ուղեկցող փաստաթղթերը Խորհրդի անդամներին է ուղարկվում նիստի օրվանից առնվազն 10 օր առաջ:

Խորհրդի անդամների մասնակցությունը Խորհրդի նիստերին ունի հետևյալ պատկերը՝ բոլոր նիստերին մասնակցել են Խորհրդի 9 անդամներ, երկու անդամ մասնակցել է Խորհրդի 2 նիստի:

Գործադիր մարմին

Ընկերության գործադիր մարմինը բաղկացած է մեկ գլխավոր տնօրենից՝ Մնացական Անդրիասի Մնացականյան, որի կենսագրությունը տրված է սույն հաշվետվության 7-րդ էջում:

2011թ. Ընկերության ներքին աուդիտ իրականացնող անձ և կորպորատիվ քարտուղար չի նշանակվել:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003թ. մայիսի 2-ի «էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» և «էներգակարգաբերում» փակ բաժնետիրական ընկերություններ ստեղծելու մասին» N779-Ա որոշման 1 կետի ա) ենթակետի պահանջներին համապատասխան ստեղծվել է «էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերություն:

Նույն որոշման 6-րդ կետի համաձայն «էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահվել են հետևյալ պաշտոնատար անձանցից յուրաքանչյուրին քվեարկող բաժնետոմսերի ընդհանուր թվի 1/5 չափով.

Հայաստանի Հանրապետության վարչապետ

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար

ՀՀ էներգետիկայի նախարար

ՀՀ արդարադատության նախարար

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետ

«էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի հիմնադիր ժողովը տեղի է ունեցել 2003թ. հոկտեմբերի 30-ին, որի որոշման 1-կետով հաստատվել է «էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի ստեղծումը:

ՀՀ կառավարության 2003թ. նոյեմբերի 6-ի «ՀՀ էներգետիկայի ոլորտի պետական ընկերությունների 2003 – 2007 թվականների ֆինանսական առողջացման ծրագրի ու 2003 – 2007 թվականների ֆինանսական հոսքերի կանխատեսումների և մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N1694-Ն որոշման 2-րդ կետի պահանջներին համապատասխան Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող Ընկերության բաժնետոմսերի լիազորությունները վերապահվել է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարին:

Ընկերության կանոնադրությունը Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2003թ. նոյեմբերի 3-ին: Ընկերության 2010թ. հունիսի 25-ի Ընդհանուր ժողովի որոշմամբ կատարվել են փոփոխություններ կանոնադրությունում, որոնք սահմանված կարգով գրանցվել են Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում:

ՀՀ բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի 2003թ. դեկտեմբերի «էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ին էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման լիցենզիա տրամադրելու մասին» N87-Ա որոշման 1 կետով Ընկերությանը

տրամադրվել է էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման լիցենզիա:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընկերությունը իր կառուցվածքում ունի մեկ՝ «էներգակապ» մասնաճյուղ:

Ընկերության տնօրինության տակ են գտնվում ներքոհիշյալ վարչական և արտադրական տարածքները.

ՀՀ Կառավարության 2003թ. մայիսի 2-ի «էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» և «էներգակարգաբերում» փակ բաժնետիրական ընկերություններ ստեղծելու մասին N779-Ա որոշման հավելված 1-ով փոխանցվել է շենք շինություն («էներգակապ» մասնաճյուղ), որոնք սեփականության իրավունքով՝ 2005թ. հոկտեմբերի 18-ին, 1092.3 քառ. մետր մակերեսով, գրանցված են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 3-6 մատյանի 000295 համարի տակ, քաղ. Երևան, Արաբկիր համայնք, Մալխասյանց փող. թիվ 2 հասցեում, այդ թվում՝ վարչական շենք, պահեստներ, ավտոտնակներ, ծածկեր, բենզալցակայան:

Նույն կադաստրի պետական կոմիտեում 2006թ.-ից քաղ.Երևան, Մալխասյանց 2 հասցեի 0.265 հա հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը՝ ՀՀ կառավարության 01.10.05թ. N199-Ն որոշման և ՀՀ հողային օրենսգրքի 23 հոդվածի պահանջների համաձայն, փոխանցվել է «էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ին:

2006թ. Ընկերության կողմից անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով զբաղեցրած հողամասի («էներգակապ» մասնաճյուղ - 0.265 հա) նկատմամբ գրանցվել է

սեփականության իրավունք, որը ակտիվների կազմում ներառելու և հաշվապահական ձևակերպումներ տալու վերաբերյալ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2/3 1-5/3-3058, 07.03.06թ. պարզաբանմամբ որպես հետաձգված եկամուտ Ընկերությունը ձևակերպել է 105.979 մլն դրամ: Նշված եկամուտը պետք է ճանաչվի որպես եկամուտ սիստեմատիկ և ռացիոնալ հիմունքով, տվյալ հողամասի

վրա կառուցված շենքերի, շինությունների միջին կշռված մնացորդային օգտակար
ծառայության ժամկետի ընթացքում և վերագրվի հաշվետու ժամանակաշրջանի եկամուտներին:

ՀՀ կառավարության 2009թ. օգոստոսի 13-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերությանը գույք հանձնելու մասին» N924-Ա որոշմամբ «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ Երևան քաղաքի Աբովյան 27 հասցեում գտնվող՝ 3436.95 քառ. մետր մակերեսով ու 2327154 հազ. դրամ գնահատված արժեքով շենքը և դրա սպասարկման ու օգտագործման համար հատկացված 0.13639 հեկտար հողատարածքը ներդրվել է «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում: ՀՀ Կառավարության 2010թ. փետրվարի 18-ի N150-Ա որոշմամբ «3436.95 քառ. մետր մակերեսով» բառերը փոխարինվել են «3536.95 քառ. մետր մակերեսով» բառերով, իսկ «2327154» թիվը՝ «2343603»:

2010թ. ապրիլի 12-ին սեփականության իրավունքով՝ 3536.95 քառ. մետր մակերեսով շենքը և 0.13639 հեկտար հողատարածքը՝ գրանցված են ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 010063-21 մատյանի 00210 համարի տակ, քաղ. Երևան, Կենտրոն համայնք, Աբովյան փող. թիվ 27 հասցեում:

II. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2011թ. ընթացքում Ընկերությունը, համապատասխան մակարդակով, իրականացրել է օպերատորի ծառայության մատուցման լիցենզիայով նախատեսված բոլոր գործառույթները՝ ապահովելով ՀՀ էներգահամակարգի անվտանգությունն ու հուսալիությունը: Տարվա ընթացքում Կենտրոնական կարգավարական ծառայության աշխատակիցների մեղքով վթարներ չեն արձագագրվել:

Հանդիսանալով էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակից, «ԷԷՀՕ» ՓԲԸ-ն իր փոխհարաբերությունները շուկայի այլ մասնակիցների հետ վարում է համապատասխան «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և էլեկտրաէներգետիկական համակարգի լիցենզավորված այլ անձանց փոխհարաբերությունների կարգը հաստատելու մասին» ՀՀ ՀԾԿՀ 2008թ. հուլիսի 2-ի N347-Ն որոշման: «ԷԷՀՕ» ՓԲԸ-ի գործունեության ոլորտում կարևոր տեղ է հատկացված նաև ՀՀ ՀԾԿՀ «ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ապահովման կանոններ» 2004թ. դեկտեմբերի 24-ի N176-Ն որոշմամբ սահմանված դրույթների իրագործմանը:

Ավարտվել է ընկերության վարչական շենքի հիմնանորոգումը:

Կատարվել է Կապի կենտրոնական հանգույցը սնող վթարային սնուցման սարքերի և հեռախոսալարերի մոնտաժումը ու տեղադրումը, հեռուստամեխանիկայի սերվերների և կենտրոնական ընդունող կայանի ապամոնտաժումը, տեղափոխումը այլ սենյակ, հին կարգավարական վահանի ապամոնտաժումը, ABB-ի մասնագետների
հետ համատեղ 26 էներգաօբյեկտներում SCADA ազդանշանների մեկ առ մեկ ստուգումը:

Ընկերությունը, լիցենզիայի պայմաններին համապատասխան, տարվա ընթացքում մշակել և արտադրող, բաշխող և տեղափոխող ընկերություններին է տրամադրել համապատասխան հրահանգներ:

Տեխնիկական բարձր մակարդակով և փոխադարձ վստահության մթնոլորտում է ապահովվում «Թավանիր» ընկերության ԱԿԿ-ի և Ընկերության ԿԿԾ կարգավարների միջև փոխհարաբերությունների և 220կՎ Ահար-1, Ահար-2 միջպետական
էլեկտրահաղորդման գծերի օպերատիվ կառավարման վերաբերյալ կնքված

համաձայնագրով նախատեսված պահանջների կատարումը: Պարբերաբար վերամշակվել են արդեն գործողության մեջ գտնվող հրահանգները և տրամադրվել համապատասխան ընկերություններին:

- Ապահովվել է կապի և հեռուստամեխանիկայի անխափան գործունեությունը:
- Վերանորոգվել և մասնակի փոխարինվել են տարբեր տեսակի մոտ 3.42 կմ երկարությամբ կապի մալուխներ՝ 11 ուղղություններով:
- Ուժեղացվել են երկաթբետոնե հենակիրներով և փայտյա հենասյուներով մոտ 11.8 կմ երկարությամբ կապի օդային գծեր՝ 3 ուղղություններով:
- «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն SCADA համակարգի միացնելու համար օպտիկամանրաթելքային մալուխ է անցկացվել Աբովյան-27-ից Արմենակյան-127՝ 3 կմ երկարությամբ:
- «Կարմիր-1,2» 110կՎ օդային գծերի 25,26,27,28 հենասյուների տեղափոխման հետ կապված տեղադրել են միացման տուփեր և կատարվել են միացումները:
- «Առինջ» - «Հրազդան» 110 կՎ գծի օպտիկամանրաթելքային մալուխը նույնպես տեղափոխվել է՝ կապված հենասյան տեղափոխման հետ:
- Արտադրական նպատակահարմարությունը կորցնելու պատճառով, ապամոնտաժվել է «Սիսիան-Թոլորսի ջրամբարի» օդային գիծը՝ 1.2 կմ երկարությամբ և մուտքագրվել պահեստ:
- Վերականգնվել են 46 ռադիոկայաններ և ռադիոռելեային սարքեր, ինչպես նաև ալեհավաքներ և նրանց միացնող բարձր հաճախականության մալուխներ:
- Ապամոնտաժվել են «ՏՌԱԼ» տիպի ռադիո ռելեային կայանները հետևյալ ուղղություններով՝
  - «ԿԿՀ»-«Էներգակապ» մ/ճ - «Արգել» ՀԷԿ ջրամբար - «Հրազդան» հեռուստակայան - «Հրազդան» ՋԷԿ
  - «ԿԿՀ»-«Էներգակապ» մ/ճ - «ՀԱԷԿ»

Բացակա կարևորագույն կարգավարական կապերը և հեռուստամեխանիկայի կապուղիները ապահովելու նպատակով, վերը նշված ուղղություններով կազմակերպվել են «Մալյուտկա» տիպի ռադիո ռելեային կայանների մոնտաժում և գործարկում, մեզ հատկացված հաճախականությունների միջակայքում:

Ինչպես նաև «Արգել» ՀԷԿ - «Հրազդան» ՀԷԿ օդային գծին զուգահեռ կազմակերպվել են ռելեային կապուղիներ, բարձացնելով կապի հուսալիությունը «Արգել» ՀԷԿ-ի

ջրամբարի հետ:

- Նորոգվել են բարձր հաճախականության սարքավորումներից ԱՎՍ-3, ԱՍԿ-1,3 ԱՎՍ-ՌՍ տիպի սարքավորումների 36 բլոկ, ԱԴԱՍԵ տիպի կարգավարական սարքի՝ 29 բլոկ, խտացման սարքերի՝ 22 բլոկ, թվային խտացման սարքերի՝ 18 բլոկ:

- Վերանորոգվել են անխափան էներգասնուցման սարքերի 40 բլոկ:

- 2011թ-ին ապահովվել է Հայաստանի Հանրապետության տարածքում Կապի ծառայությունների օպերատիվ աշխատանքը ապահովող 33 մարդատար, բեռնատար, հորատող, ամբարձիչ և հատուկ նշանակության ավտոմեքենաների նորմալ շահագործումը, վերանորոգումը և սպասարկումը:

SCADA/կապ համակարգի շահագործման ընթացքը թելադրում է ունենալ նոր ամբարձիչ-բեռնատար մեքենա, օպտիկական մալուխների վթարային և ընթացիկ նորոգումների համար, ինչպես նաև հատուկ նշանակության սարքեր:

III. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ընկերության տարեկան համախառն եկամուտը հիմնական գործունեությունից կազմել է 1295.0 մլն դրամ, խորհրդի կողմից հաստատված նախահաշվով նախատեսված 1196.6 մլն դրամ գումարի դիմաց (լրացուցիչ եկամուտը կազմել է 98.4մլն դրամ): Նշված եկամուտի գոյացման աղբյուրները հետևյալն են. 1034.6 մլն դրամը՝ ՀՀ տարածքում մատուցած ծառայությունների դիմաց, «ԵրՋէկ» ՓԲԸ-ի կողմից Հայաստան-Իրան ներկրված գազի դիմաց էլեկտրաէներգիայի արտահանման ընթացքում Ընկերության սակագնով նախատեսված արտահանման ընթացքում մատուցած ծառայության դիմաց ստացված եկամուտ 146.0 մլն դրամ (նախատեսված էր 146.0 մլն դրամ), որպես հիմնական գործունեությունից ստացված եկամուտ և լրացուցիչ եկամուտ՝ 114.3 մլն դրամ, որից 51.3 մլն դրամը՝ էլեկտրաէներգիայի արտահանման և ներկրման ընթացքում մատուցած ծառայությունների դիմաց, 3.1 մլն դրամը՝ էներգահամակարգի պետ.ռեզերվի պահպանության համար մատուցած ծառայությունների դիմաց, որը ՀՀ էներգետիկայի նախարարի հրամանով դրված է ընկերության վրա, 0.2 մլն դրամը՝ էներգահամակարգի ներքին հեռախոսների սպասարկման դիմաց, բանկի ավանդի տոկոս՝ 7.2 մլն դրամ, Աբովյան 27 շենքի տարածքի վարձակալությունից՝ 22.3 մլն դրամ, «ՀԷՑ» ՓԲԸ-ին մատուցած ծառայությունների (ՌՊԱ դրվածքների հաշվարկ) համար՝ 24.0 մլն դրամ, փոքր ՀԷԿ-երին ՌՊԱ դրվածքների հաշվարկի համար 3.0 մլն դրամ և այլ գործունեությունից՝ 3.2 մլն դրամ: Այլ եկամուտները կազմել են 7.2 մլն դրամ (հողի սեփականաշնորհման արդյունքում՝ 5.2 մլն դրամ, փոխարժեքային տարբերությունից՝ 2.0 մլն դրամ): Ընկերության տարեկան ընդհանուր եկամուտը կազմել է 1302.3 մլն դրամ (հավելված 1):

Իրացված աշխատանքների ինքնարժեքը, ներառյալ ընդհանուր վարչական ծախսերը, կազմել է 1276.2 մլն դրամ և գործառնական այլ ծախսերը՝ 800.5 մլն դրամ՝ որից ՀՀ Վարչապետի հանձնարարությամբ «Ծիգ» ՊՀ լուծարման ժամկետի երկարացման հետևանքով կատարված «Ծիգ» ՊՀ-ի անձնակազմի պահպանման ծախսեր՝ 14.7 մլն դրամ, 3.3 մլն դրամ դրամական օգնություններ կապված աշխատակցի կամ նրա հարազատների մահվան հետ, 779.4 մլն դրամ արտարժույթի կուրսային տարբերություն և 3.1 մլն դրամ՝ տույժ և տուգանք: Ընդամենը ծախսերը կազմել են

2076.7 մլն դրամ (հավելված 2):

Ինչպես ՀԾԿ հանձնաժողովի կողմից Ընկերության ամսական ծառայության վճարի հաշվարկում, այնպես էլ տարեկան ծախսերի և եկամուտների նախահաշվում ներառված են Համաշխարհային և Ճապոնական Բանկերի կողմից տրամադրված վարկերի և դրանց տոկոսների մարման համար անհրաժեշտ գումարներ
(471.0 մլն դրամ), սակայն փաստացի որպես ծախս ճանաչվել է միայն վարկի տոկոսների համար մարված գումարները՝ 8.7 մլն դրամ, տարբերությունը 462.3 մլն դրամ:

Ընկերության 2011թ. գործունեության արդյունքում ստացվել է վնաս՝ 774.4 մլն դրամ, վճարվել է շահութահարկ 7.3 մլն դրամ, զուտ վնասը կազմել է 781.7 մլն դրամ:

Որոշ ծախսերի ավելացումը համեմատած հաստատված նախահաշվի հիմնականում պայմանավորված է (ըստ հոդվածների)

- Համաշխարհային բանկի կողմից տրամադրված վարկային միջոցների հաշվառումը իրականացվում է ԱՄՆ դոլարին համարժեք դրամով, իսկ ճապոնական բանկի կողմից տրամադրված վարկինը՝ ճապոնական իենով: 2011թ. ընթացքում ԱՄՆ դոլարի և ճապոնական իենի փոխարժեքների բարձրացման արդյունքում, ընկերության պարտավորության գումարը ավելացավ 779.4 մլն դրամով (կուրսային տարբերություն):

- Վառելիք, որը հիմնականում կապված է SCADA ծրագրի ներդրման ընթացքում աշխատողների, առանձին դեպքերում բրիգադների, մասնակցությունը հանրապետության ողջ տարածքում կազմակերպելու և իրականացնելու հետ, ինչպես նաև վառելիքի գնի թանկացման արդյունքում՝ 7.8 մլն դրամ:

- Համաշխարհային Բանկի և Ճապոնական Բանկի կողմից տրամադրված վարկային միջոցների հաշվին ձեռք բերված կազմ.տեխնիկայի, համակարգչային ծրագրի և SCADA ծրագրով նախատեսված հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների գումարը ներառված չէ ինչպես ՀԾԿ հանձնաժողովի կողմից հաստատված ամսական ծառայության վճարի հաշվարկում, այնպես էլ Ընկերության տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշվում, որի արդյունքում ամորտիզացիոն ծախսերը նախահաշվից ավելի է հաշվարկվել 534.7 մլն դրամ:

Ընդհանուր ուղղակի ծախսերի մեջ առանձին ծախսային հոդվածների համամասնությունը տոկոսային արտահայտությամբ կազմում է՝

Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ	448.1 մլն դրամ	35.1%
Հատկացումներ սոց. ապահով. հիմնադրամին	63.2 մլն դրան	5.0%
Հումք և նյութեր	59.3 մլն դրամ	4.6%
Մաշվածություն	592.9 մլն դրամ	46.5%
Վերանորոգման ծախսեր	15.9 մլն դրամ	1.2%
Վարկի %-ի մարում	8.7 մլն դրամ	0.7%
Այլ ծախսեր	88.1 մլն դրամ	6.9%
ԸՆԴԱՄԵՆԸ	1276.2 մլն դրամ	100%



Ընկերության ակտիվների կառուցվածքում ոչ ընթացիկ ակտիվները կազմում են 86.3%, նախորդ տարվա 96.8% դիմաց:

Առևտրային դեբիտորական պարտքերը նախորդ տարվա հետ համեմատած նվազել է 5.7 մլն դրամով և 01.01.2012թ. դրությամբ կազմում է ընթացիկ ակտիվների 9.7%-ը: Սեփական կապիտալը նվազել է 781.7 մլն դրամով և կազմում է հաշվեկշռի պասիվային մասի 19.5%-ը: Կանոնադրական կապիտալի զուտ գումարը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 2 665 271հազ. դրամ:

Ընկերության պարտավորությունների կազմում ոչ ընթացիկ պարտավորությունները կազմում են 91.2%:

Շահութահարկի գծով ծախսը կազմել է 7284.0 հազ.դրամ: Զուտ վնասը, շահութահարկի գծով ծախսի ավելացումից հետո կազմել է 781 743.0 հազ. դրամ:

Ընկերության շահութաբաժնի վճարման քաղաքականությունը իրականացվում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2006թ.-ի նոյեմբերի 30-ի N1110-Ն հրամանով հաստատված «50 տոկոսից ավել պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերությունների շահութաբաժնի հաշվարկման հաշվարկ»-ի համաձայն, որի 060 տողի զուտ վնասի մեծությունը՝ հաշվի առած ավելացումները կազմում է 355088 հազ. դրամ:

Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցման ենթակա շահութաբաժնի գումար չի առաջացել:

Հավելված 1

ՏԵՂԵԿԱՆՔ

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ
2011թ. մատուցված ծառայությունների վերաբերյալ

մլն դրամ

	Գործունեության անվանումը	Փաստացի եկամուտ
1	2	
1	Հիմնական գործունեություն	1295.0
1.1	*այդ թվում՝ըստ սակագնի*	*1180.717*
	ա) «ՀԷՑ» ՓԲԸ-ին էլ.էն.համ.օպերատ.ծառայութ.մատուց	1034.605
	բ) «ԵրՋԷԿ» ՓԲԸ-ին ԻԻՀ արտահանման ընթացքում .ծառայութ.	146.112
1.2.	*այլ գործունեություն այդ թվում՝*	*114.28*
1.2.1	Վրաստանից էլ.էն.ներկրման ընթացքում մատուց. ծառայութ.	21.322
1.2.2	«ԵրՋԷԿ» ՓԲԸ-ին ԻԻՀ արտահանման ընթացքում .ծառայութ.(Արցախ)	20.694
1.2.3	ՀրազՋԷԿ 5-րդ բկոկ	9.340
1.2.4	Պահպանման ծառայություն	0.18
	«Կոնվերս բանկ» ՓԲԸ	*0.18*
1.2.5.	Տարածքի վարձակալություն ԸՆԴԱՄԵՆԸ	22.308
	որից՝ «Հաշվարկային կենտրոն»ՓԲԸ	*4.800*
	«Որոտան ՀԷԿՀ» ՓԲԸ	*1.081*
	«Կոնվերս բանկ» ՓԲԸ	*0.360*
	«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ	*8.180*
	«HSBC Բանկ Հայաստան» ՓԲԸ	*0.405*
	«Մեգանետ» ՍՊԸ	*0.108*
	«Էնքաղշին» ՍՊԸ	*0.522*
	Փոքր ՀԷԿ-երի Միություն	*0.547*
	ՀՀ էն.և բն.պաշ.նախ.աշխատ.	*3.962*
	«Ն.Տ.Սերվիս» ՍՊԸ	*0.495*
	«Ճամբարակի ՃՇՀ» ԲԲԸ	*0.324*
	«Արթուր Կոստանյան» ԱՁ	*0.083*
	Օրանժ Արմենիա	*1.440*
1.2.6.	Պետ.ռեզերվի ծառայություն	3.073
1.2.7.	Հեռախոսային կապի ծառայութ.	0.144
1.2.8.	Այլ ծառայություններ («ՀԷՑ» ՓԲԸ)	24.02
1.2.9.	Փոքր ՀԷԿ-եր	3.0
1.2.10.	«ԲԷՑ» ՓԲԸ	0.04
1.2.11	«ՄԷԿ» ՓԲԸ	1.2
1.2.12.	Բանկի %	7.271
1.2.13.	Հիմնական միջոցների վաճառք	1.689

Հավելված 2

ՏԵՂԵԿԱՆՔ

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ

2011թ. ըստ նախահաշվի և փաստացի տարեկան եկամուտների և ծախսերի վերաբերյալ

մլն դրամ

	Ծախսերի անվանումը	2011թ.	
		նախահաշիվ	փաստացի
1	2	3	4
Ա	**Եկամուտներ**	**1196.6**	**1302.3**
	այդ թվում՝ հիմնական գործունեություն՝ ընդամենը	1180.6	1180.7
	որից «ՀԷՑ» ՓԲԸ-ին մատուց. ծառ. դիմաց	*1034.6*	*1034.6*
	«ԵրՋԷԿ» ՓԲԸ-ի կողմից արտահանված էլ.էներգիայի ծառ.վճար	*146.0*	*146.1*
	այլ գործունեությունից եկամուտ	16.0	114.3
	Լիցենզավորված գործունեություն ԸՆԴԱՄԵՆԸ		***51.3***
	Վրաստանից էլ.էներգիայի ներկրման ընթացքում մատուցված ծառայություն		*21.3*
	ԵրՋԷԿ (Արցախ) էլ.էներգիայի արտահանման ընթացքում մատուցված ծառայություն		*20.7*
	«Հրազդանի 5-րդ բլոկ» էլ.էներգիայի արտահան ընթացքում մատուցված ծառայություն		*9.3*
	Չլիցենզավորված գործունեություն ԸՆԴԱՄԵՆԸ		***63.0***
	Տարածքի վարձակալություն		*22.3*
	Պետ.ռեզերվ		*3.1*
	«ՀԷՑ» ՓԲԸ-ին մատուցված ծառայություն		*24.0*
	Փոքր ՀԷԿ-երին մատուցված ծառայություն		*3.0*
	Բանկի ավանդի %		*7.2*
	Այլ		*3.4*
	Եկամուտ փոխարժեքային տարբերությունից		**2.0**
	Եկամուտ ակտիվներին վերաբերվող շնորհներից		**5.3**
Բ	**Ծախսեր**	**1190.5**	**2076.7**
1	Նյութական ծախսեր	67.9	59.3
	վառելիք	*22.0*	*29.8*
	էլ.էներգիա	*20.3*	*17.5*
	տարբեր ավտոպահեստամասեր	*6.2*	*8.2*
	դիս.վահանակի էլեկտրոնային լամպեր	*7.5*	
	օպտիկա կամ մալուխ, տրոս, միացման տուփեր	*11.7*	*3.0*
	չնախատեսված նյութեր	*0.2*	*0.8*
2	Մաշվածություն	58.2	592.9
3	Վերանորոգման ծախսեր	16.0	15.9
4	Հաշվարկներ աշխատակազմի հետ (աշխատավարձ)	418.5	448.1
	այդ թվում՝ հաստատագրված վճարի հաշվին	*408.5*	*408.5*
	այլ եկամուտների հաշվին	*10.0*	*39.6*
5	Հատկացումներ սոցիալ ապահովագրության հիմնադրամին	71.0	63.2
6	Այլ ծախսեր	82.9	80.2
	հեռախոսային կապ, ինտերնետային կապ	*7.0*	*7.4*
	բանկեր	*1.2*	*1.2*
	կոմունալ տնտեսության ծախսեր	*0.7*	*0.7*
	գործուղում	*7.5*	*6.0*
	բաժանորդագրություն	*0.4*	*1.3*
	գրասեն.ապր.,պահեստ փոքր և այլ առարկ.	*1.0*	*1.5*
	ներկայացուցչական ծախսեր	*0.8*	*4.4*
	արտահագուստ	*1.5*	
	չնախատեսված ծախսեր	*0.2*	*3.1*
	կարգավորման վճար	*1.4*	*1.4*
	վարձակալական վճար	*47.3*	*39.3*
	աուդիտ	*3.0*	*3.0*
	ապահովագրություն	*1.1*	*1.1*
	պահպանության հետ կապված ծախսեր	*7.2*	*7.2*
	չփոխհատուցվող հարկեր	*2.6*	*2.6*
7	Լիցենզիոն տարեկան տուրք	5.0	5.0
8	Վարկի սպասարկում	471.0	8.7
9	Սակագնով նախատեսված և փաստ.վճ.վարկի մարման և սպասարկման ծախսերի տարբերություն		
11	«ՕԻԳ ՊՀ» կատարված ծախսեր		14.7
12	Հարկային տույժեր		3.1
13	Դրամական օգնություն		3.3
14	Պետ.ռեզերվ		2.9
15	Փոխարժեքային տարբերություն		779.4
16	Հիմնական միջոցների դուրս գրում		
Գ	**Շահույթ (վնաս)**	**6.1**	**-774.4**
Դ	**Շահութահարկի գծով ծախս**		**-7.3**
Ե	**ԸՆԴԱՄԵՆԸ շահույթ (վնաս)**		**-781.7**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ
2011թ. ըստ նախահաշվի և փաստացի տարեկան եկամուտների և ծախսերի վերաբերյալ
(առանց ոչ գործառնական եկամուտների և ծախսերի)

մլն դրամ

	Ծախսերի անվանումը	2011թ.	
		նախահաշիվ	փաստացի
1	2	3	4
Ա	**Եկամուտներ**	**1196.6**	**1291.9**
	այդ թվում՝ հիմնական գործունեություն՝ ընդամենը	1180.6	1180.7
	որից «ՀԷՑ» ՓԲԸ-ին մատուց. ծառ. դիմաց	*1034.6*	*1034.6*
	«ԵրՋԷԿ» ՓԲԸ-ի կողմից արտահանված էլ.էներգիայի ծառ.վճար	*146.0*	*146.1*
	այլ գործունեությունից եկամուտ	16.0	111.2
	Լիցենզավորված գործունեություն ԸՆԴԱՄԵՆԸ		***51.3***
	Վրաստանից էլ.էներգիայի ներկրման ընթացքում մատուցված ծառայություն		*21.3*
	ԵրՋԷԿ (Արցախ) էլ.էներգիայի արտահանման ընթացքում մատուցված ծառայություն		*20.7*
	«Հրազդանի 5-րդ բլոկ» էլ.էներգիայի արտահան ընթացքում մատուցված ծառայություն		*9.3*
	Չլիցենզավորված գործունեություն ԸՆԴԱՄԵՆԸ		***59.9***
	Տարածքի վարձակալություն		*22.3*
	«ՀԷՑ» ՓԲԸ-ին մատուցված ծառայություն		*24.0*
	Փոքր ՀԷԿ-երին մատուցված ծառայություն		*3.0*
	Բանկի ավանդի %		*7.2*
	Այլ		*3.4*
Բ	**Ծախսեր**	**1190.5**	**1273.3**
1	Նյութական ծախսեր	67.9	59.3
	վառելիք	*22.0*	*29.8*
	էլ.էներգիա	*20.3*	*17.5*
	տարբեր ավտոպահեստամասեր	*6.2*	*8.2*
	դիս.վահանակի էլեկտրոնային լամպեր	*7.5*	
	օպտիկական մալուխ, տրոս, միացման տուփեր	*11.7*	*3.0*
	չնախատեսված նյութեր	*0.2*	*0.8*
2	Մաշվածություն	58.2	592.9
3	Վերանորոգման ծախսեր	16.0	15.9
4	Հաշվարկներ աշխատակազմի հետ (աշխատավարձ)	418.5	448.1
	այդ թվում՝ հաստատագրված վճարի հաշվին	*408.5*	*408.5*
	այլ եկամուտների հաշվին	*10.0*	*39.6*
5	Հատկացումներ սոցիալ ապահովագրության հիմնադրամին	71.0	63.2
6	Այլ ծախսեր	82.9	80.2
	հեռախոսային կապ, ինտերնետային կապ	*7.0*	*7.4*
	բանկեր	*1.2*	*1.2*
	կոմունալ տնտեսության ծախսեր	*0.7*	*0.7*
	գործուղում	*7.5*	*6.0*
	բաժանորդագրություն	*0.4*	*1.3*
	գրասեն.ապր.,պահեստ փոքր և այլ առարկ.	*1.0*	*1.5*
	ներկայացուցչական ծախսեր	*0.8*	*4.4*
	արտահագուստ	*1.5*	
	չնախատեսված ծախսեր	*0.2*	*3.1*
	կարգավորման վճար	*1.4*	*1.4*
	վարձակալական վճար	*47.3*	*39.3*
	աուդիտ	*3.0*	*3.0*
	ապահովագրություն	*1.1*	*1.1*
	պահպանության հետ կապված ծախսեր	*7.2*	*7.2*
	չփոխհատուցվող հարկեր	*2.6*	*2.6*
7	Լիցենզիոն տարեկան տուրք	5.0	5.0
8	Վարկի սպասարկում	471.0	8.7
Գ	**Շահույթ (վնաս)**	**6.1**	**18.6**
Դ	**Շահութահարկի գծով ծախս**		**-7.3**
Ե	**ԸՆԴԱՄԵՆԸ շահույթ (վնաս)**		**11.3**

IV. ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

Ընկերության կազմակերպական կառուցվածքը (կցվում է) և հաստիքացուցակը խորհուրդը հաստատել է 2011թ. մարտի 22-ին: Ընկերության աշխատողների թվաքանակը՝ համաձայն խորհրդի կողմից հաստատված հաստիքացուցակի կազմել է 279 հաստիք, փաստացի աշխատողների միջին ցուցակային թվաքանակը 2011թ. ընթացքում կազմել է 237 մարդ: 2010թ. նույն ցուցանիշը կազմել է նույնպես 237 մարդ: 2011թ. ընթացքում աշխատանքի են ընդունվել 31 մարդ, աշխատանքից ազատվել 28 մարդ:

Մասնագիտական որակավորում պահանջվող աշխատողների 95%-ը ունեն համապատասխան բարձրագույն կրթություն, աշխատողների 36.7%-ը (նախորդ տարի 35.5%) մինչև 35 տարեկան են, 39.5%-ը (նախորդ տարի 38.5%)՝ 35 – 50 տարեկան, 23.8%-ը (նախորդ տարի 26.0%) 50-ից բարձր տարիք ունեցող աշխատողներ են:

2011թ. ընթացքում աշխատողներին վճարված աշխատավարձը և դրան հավասարեցված վճարները կազմել է 448.1 մլն դրամ, համեմատած 2010թ. փաստացի աշխատավարձի հետ (444.4 մլն դրամ) աշխատավարձը աճել է ընդամենը 3.7 մլն դրամով կամ 0.8%-ով, իսկ միջին ամսական աշխատավարձը (157.6 հազար դրամ) համեմատած 2010թ. հետ (156.2 հազ դրամ)՝աճել է 1.4 հազար դրամով կամ 0.9%-ով:

Խորհրդի 28.03.2006թ. նիստի որոշմամբ Ընկերությունում գործում է «էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի օպերատիվ աշխատանքներին անմիջական մասնակցություն ունեցող աշխատակիցների ամսական պարգևատրման» Կարգը, խորհրդի 17.01.2007թ. նիստի որոշմամբ Ընկերությունում գործում են «էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ աշխատողների արտադրատնտեսական գործունեության եռամսյակային արդյունքների համար պարգևատրման ցուցանիշների, պայմանների, չափերի և կարգի մասին» դրույթը և «էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ աշխատակիցներին զուտ շահույթի հաշվին դրամական օգնություն տրամադրելու մասին» Կարգը՝ հաստատված «էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

«ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐ» ՓԲԸ-Ի ՎԱՐՉԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

«Հաստատված է»
«Էլեկտրաէներգետիկական համակարգի
օպերատոր» ՓԲԸ 22.03.2011թ.
խորհրդի նիստում
խորհրդի նախագահ
_____Մ.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ



V. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2009թ. ընթացքում ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված պայմանագրերի օրինակելի ձևերի հիման վրա կնքվել են պայմանագրեր մի շարք ընկերությունների հետ՝ ինչպես ներքին սպառման, այնպես էլ էլեկտրաէներգիայի արտահանման և ներկրման ընթացքում օպերատորի ծառայության մատուցման վերաբերյալ, ինչպես նաև ՀՀ գնումների մասին օրենքի պահանջներին համապատասխան, Ընկերության արտադրական գործունեության անխափան ընթացքը ապահովող ապրանքանյութական արժեքներ ձեռք բերելու նպատակով պայմանագրեր են կնքվել տարբեր կազմակերպությունների հետ:

2011թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ Ընկերությունում անց է կացվել հիմնական միջոցների գույքագրում, որի արդյունքները արտացոլվել են 2011թ. տարեկան հաշվետվություններում: Ընկերությանը հասցված վնասի, անօրինական դուրս գրումների, վճարումների և ծախսերի, փաստաթղթերով չհիմնավորված ծախսերի, ինչպես նաև նախահաշվից ավելի, ոչ նպատակային և անարդյունավետ ծախսերի խախտման դեպքեր ինչպես գույքագրման արդյունքներով, այնպես էլ տարվա ընթացքում չեն արձանագրվել:

2011թ. հունվար ամսին անց կացված մրցույթի արդյունքում հաղթած ընկերության կողմից իրականացվել է Ընկերության 2010թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ, որի անց կացման համար պայմանագրով նախատեսված գումարը կազմել է 3.0 մլն դրամ (առանց ԱԱՀ):

ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011թ. նոյեմբերի 16-ի «էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի նկատմամբ տուգանք կիրառելու մասին» N537Ա որոշմամբ լիցենզիայի պայմանների 5.23 կետը խախտելու համար «էԷՀՕ» ՓԲԸ-ին ենթարկել տուգանքի մեկ միլիոն դրամ գումարի չափով:

ՀՀ Վերահսկիչ պալատի կողմից անցկացված ուսումնասիրությունների և ստուգումների արդյունքում արձանագրվել է 2.1 մլն դրամի խախտում:

2011թ. ընթացքում ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի օպերատիվ հետախուզության վարչության համապատասխան աշխատակիցների կողմից իրականացվել են ստուգումներ և ուսումնասիրություններ, որոնց արդյունքում խախտումներ չեն արձանագրվել:

Սույն հաշվետվությանը կցվում է Ընկերության վերջին հինգ տարիների (2007–2011թ.թ.) ֆինանսատնտեսագիտական գործունեությանը վերաբերող համեմատական վերլուծություններ (հավելված 3 - 10):

«ԷԷՀՕ» ՓԲԸ
խորհրդի նախագահ,
գլխավոր տնօրեն Մ.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Հավելված 3

ՏԵՂԵԿԱՆՔ

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ

2007-2011թ.թ. նախահաշվով նախատեսված և փաստացի եկամուտների և ծախսերի վերաբերյալ

մլն դրամ

	Ծախսերի անվանումը	2007թ.		2008թ.		2009թ.		2010թ.		2011թ.	
		Նախահաշիվ	Փաստացի	Նախահաշիվ	Փաստացի	Նախահաշիվ	Փաստացի	Նախահաշիվ	Փաստացի	Նախահաշիվ	Փաստացի
1	2	5	6	7	8	9	10	11	12	11	12
Ա	**Եկամուտներ** *ա.թ.հիմնական գործունեություն և կուրսային տարբերություն, հողի վերագնահատում*	507.4	532.4	520.7	533.4	689.8	696.2	1039.3	1090.9	1196.6	1302.3
1	**Եկամուտներ** *առանց կուրսային տարբերության և հողի վերագնահատման*	507.4	510.3	520.7	524.3	689.8	689.9	1039.3	1084.3	1196.6	1295.0
Բ	**Ծախսեր**	535.1	530.1	513.9	528.4	683.0	687.9	1032.4	1059.5	1190.5	1297.3
1	*Նյութական ծախսեր*	*33.5*	*34.9*	*33.7*	*38.2*	*60.3*	*36.9*	*44.1*	*44.9*	*67.9*	*59.3*
2	*Մաշվածություն*	*56.7*	*50.1*	*39.0*	*37.0*	*33.0*	*67.7*	*52.2*	*329.9*	*58.2*	*592.9*
3	*Վերանորոգման ծախսեր*	*6.0*	*3.0*	*3.0*	*4.7*	*6.0*	*6.0*	*12.0*	*11.6*	*16.0*	*15.9*
4	*Հաշվարկներ աշխատակազմի հետ (աշխատավարձ)*	*331.0*	*335.3*	*327.4*	*330.8*	*404.7*	*402.9*	*419.7*	*444.4*	*418.5*	*448.1*
5	*Հատկացումներ սոցիալ ապահովագրության հիմնադրամին*	*56.6*	*52.1*	*52.4*	*51.2*	*62.0*	*57.0*	*70.5*	*60.4*	*71.0*	*63.2*
6	*Այլ ծախսեր*	*51.3*	*54.7*	*58.4*	*66.5*	*117.0*	*117.4*	*433.9*	*168.3*	*558.9*	*117.9*
Գ	**Շահույթ**	-27.7	2.3	6.8	5.0	6.8	8.3	6.9	31.4	6.1	5.0

Հավելված 4

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ

2007-2011թ.թ. նախահաշվով նախատեսված և փաստացի եկամուտների վերաբերյալ

մլն դրամ

Եկամուտներ *առանց կուրսային տարբերության և հողի վերագնահատման*	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.
Նախահաշիվ	507.4	520.7	689.8	1039.3	1196.6
Փաստացի	510.3	524.3	689.9	1084.3	1295.0





Հավելված 5

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ
2007-2011թ.թ. փաստացի եկամուտների վերաբերյալ

մլն դրամ

	Ծախսերի անվանումը	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.
		փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի	փաստացի
Ա	**Եկամուտներ ԸՆԴԱՄԵՆԸ**	**525.0**	**546.4**	**699.0**	**1090.6**	**1302.1**
1	**Եկամուտներ** առանց կուրսային տարբերության և հողի վերագնահատման	**510.3**	**524.3**	**689.9**	**1084.3**	**1295.0**
1.1	ա.թ.հիմնական գործունեություն	489.4	502.6	640.5	1014.3	1180.7
1.2	արտահանում (ներկրում)	14.6	7.2	6.7	21.1	51.4
1.3	այլ ծառայությունների մատուցումից (ա.թ. Պետ ռեզերվ)	6.3	14.5	42.7	48.9	62.9



Տեղեկանք
«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ 2007թ.-2011թ. փաստացի ծախսերի վերաբերյալ

մլն դրամ

	Ծախսերի անվանումը	2007թ.		2008թ.		2009թ.		2010թ.		2011թ.	
		փաստացի	%	փաստացի	%	փաստացի	%	փաստացի	%	փաստացի	%
Բ	**Ծախսեր ընդամենը**	**530.1**	**100.0**	**528.4**	**100.0**	**687.9**	**100.0**	**1059.5**	**100.0**	**1297.3**	**100.0**
1	*Նյութական ծախսեր*	34.9	6.6	38.2	7.2	36.9	5.4	44.9	4.2	59.3	4.6
2	*Մաշվածություն*	50.1	9.5	37.0	7.0	67.7	9.8	329.9	31.1	592.9	45.7
3	*Վերանորոգման ծախսեր*	3.0	0.6	4.7	0.9	6.0	0.9	11.6	1.1	15.9	1.2
4	*Հաշվարկներ աշխատակազմի հետ (աշխատավարձ)*	335.3	63.3	330.8	62.6	402.9	58.6	444.4	41.9	448.1	34.5
5	*Հատկացումներ սոց. ապահով. հիմնադրամին*	52.1	9.8	51.2	9.7	57.0	8.3	60.4	5.7	63.2	4.9
6	*Այլ ծախսեր*	54.7	10.3	66.5	12.6	117.4	17.1	168.3	15.9	117.9	9.1











Տեղեկանք
«էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ 2007թ.-2011թ. փաստացի ծախսերի վերաբերյալ

մլն դրամ

	Ծախսերի անվանումը	2007թ.		2008թ.		2009թ.		2010թ.		2011թ.	
		փաստացի	%	փաստացի	%	փաստացի	%	փաստացի	%	փաստացի	%
Բ	**Ծախսեր ընդամենը**	**530.1**	**100.0**	**528.4**	**100.0**	**687.9**	**100.0**	**1059.5**	**100.0**	**1297.3**	**100.0**
1	*Նյութական ծախսեր*	34.9	6.6	38.2	7.2	36.9	5.4	44.9	4.2	59.3	4.6
2	*Աշխատանք*	50.1	9.5	37.0	7.0	67.7	9.8	329.9	31.1	592.9	45.7
3	*Վերանորոգման ծախսեր*	3.0	0.6	4.7	0.9	6.0	0.9	11.6	1.1	15.9	1.2
4	*Հաշվարկներ աշխատակազմի հետ (աշխատավարձ)*	335.3	63.3	330.8	62.6	402.9	58.6	444.4	41.9	448.1	34.5
5	*Հատկացումներ սոց. ապահով. հիմնադրամին*	52.1	9.8	51.2	9.7	57.0	8.3	60.4	5.7	63.2	4.9
6	*Այլ ծախսեր*	54.7	10.3	66.5	12.6	117.4	17.1	168.3	15.9	117.9	9.1











Հավելված 8

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ
2006-2010թ.թ. աշխատավարձի փաստացի հաշվեգրված գումարների վերաբերյալ

	Ծախսերի անվանումը	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.
		Փաստացի	Փաստացի	Փաստացի	Փաստացի	Փաստացի
1	Աշխատավարձ (մլն դրամ)	335.3	330.8	402.9	444.4	448.1
2	Աշխ.միջին թվաքանակ (մարդ)	254	243	240	237	237
3	Միջին ամսական աշխատավարձ (հազ. դրամ)	110.0	113.4	139.9	156.3	157.6

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ
2007-2011թ.թ. աշխատավարձի փաստացի հաշվեգրված գումարների, աշխատողների թվաքանակի և ամսական միջին աշխատավարձի գումարների վերաբերյալ

Աշխատավարձ

Ծախսերի անվանումը	2007	2008	2009	2010	2011
Աշխատավարձ փաստացի (մլն դրամ)	335.3	330.8	402.9	444.4	448.1



Աշխատողների թվաքանակ

Ծախսերի անվանումը	2007	2008	2009	2010	2011
Աշխ.թվաքանակ (մարդ)	254	243	240	237	237



Ամսական միջին աշխատավարձ

Ծախսերի անվանումը	2007	2008	2009	2010	2011
Միջին ամս աշխատավարձ (հազ. դրամ)	110.0	113.4	139.9	156.3	157.6